

Քաղաքացիների՝ 2015 թվականի հուլիս ամսվա ընդունելություն

16.07.2015



2015 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էր 96 քաղաքացի, ընդունելության էին եկել 97-ը:

Դրամական աջակցության խնդրանքով դիմել էին 91 քաղաքացիներ, որոնց խնդրանքը բավարարվեց: 2 քաղաքացի դիմել էր աշխատանքի տեղավորման հարցով, 2-ը՝ խմելու և ոռոգման ջրերի, իսկ 1 հոգի՝ հողային վեճի հիմնախնդրի հետ կապված: Նշված հարցերով դիմած քաղաքացիների հիմնախնդիրները կարգավորելու նպատակով հանձնարարություններ տրվեցին մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ ուսումնասիրելու, օրենքով սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում պատասխանելու ընդունելության եկած քաղաքացիներին: